Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

231

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏՈՒՄ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
Տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի
1903

14145

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏՈՒՄ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
Տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի
1903

Հաստատում եմ.
Երևանայ Նահանգապետ Կոմս Տիզենհաուզէն
31 յունուարի 1903 ամի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ
ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
ՎԵՐԱԲԵՐԵԼՈՒԹԻՒՆ

Ընկերութեան նպատակը, իրաւունքները եւ պարտաւորութիւնները.

§ 1. *Սպառողների ընկերութիւնը հիմնվում է Երևանի նահանգի Վաղարշապատ գիւղում այն նպատակով, որ ընկերութեան անդամները հնարաւորութիւն ունենան ձեռք բերելու ոչքան կարելի է արժան կամ շուկայի չափաւոր գներով սպառելու ու տան գործածութեան զանազան նիւթեր և միջոց տրուի անդամներին ընկերութեան գործառնութեանց վաստակից խնայողութիւն անելու։*

Մանօրուրիւն. Ընկերութեան կից կարող են կազմակերպուել պատշաճաւոր թոյլտուութեամբ և ներգործող օրէնքների համաձայն հիմնարկութիւններ, որոնց նպատակը պէտք է լինի զանազան միջոցներով ու եղանակներով բարելաւել ընկերութեան անդամների կեանքի նիւթական և բարոյական պայմանները։

§ 2. Առաջին յօդուածի համաձայն ընկերութեանը թոյլատրվում է.

ա. Հիմնել իւր սեպհական պահեստներն և խանութները կամ վարձել՝ տան գործածութեան նիւթեր պատրաստելու, պահպանելու և վաճառելու համար.

բ. պայմանաւորուել և պարտաւորուել մասնաւոր անձերի և հաստատութիւնների հետ ընկերութեանը զանազան սպառելու և տան գործածութեան նիւթեր մատակարարելու մասին, նոյնպէս և դրամական միջոցների, որոնք հարկաւոր կը լինին ընկերութեան շրջանառութեան համար։

գ. ձեռք բերել, ընդհանուր օրէնքի համաձայն, սեպհական անշարժ կայքեր, որոնք կարևոր կը համարուին ընկերութեան նպատակների համար, և

դ. ձեռնամուխ լինել պատշաճաւոր թոյլտուութեամբ ընկերութեան նպատակներին համապատասխանող ուրիշ ձեռնարկութիւնների։

§ 3. Ընկերութեան անդամներին ապրանք և գործածութեան նիւթեր վաճառելը կատարվում է կամ կանխիկ դրամով, կամ պարտքով, որի պայմանները որոշում է ընդհանուր ժողովը։

Ծանօթութիւն. Այս յօդուածի մէջ յիշուած ապրանքի վաճառումը թոյլատրվում է և կողմնակի անձանց, միայն կանխիկ դրամով և ընկերութեան ընդհանուր ժողովի որոշած պայմաններով։

§ 4. Ընկերութիւնը, նրա խանութները, գրասենեակները և գործակալները գիլդիական վկայականների, առևտրական, մաքսային, դրոշմաթղթերի և ընդհանուր ու տեղային տուրքերը վճարելու վերաբերմամբ ենթարկվում են այժմ կայսերութեան մէջ ներգործող թէ ընդհանուր և թէ ընկերութեան ձեռնարկութիւնների վերաբերեալ կանոններին և օրէնքներին, այլ և բոլոր այն որոշումներին, որոնք ապագայում այս մասին կը հրատարակուին։

§ 5. Ընկերութիւնն ունի իւր անուանական կնիքը։

Ընկերութեան միջոցները

§ 6. Ընկերութեան միջոցները կազմում են՝ շրջանառութեան և պահեստի դրամագլուխները։

§ 7. Շրջանառութեան դրամագլուխը կազմվում է.

ա. մուտքի վճարից (§ 13).

բ. անդամակցական բաժնեվճարից (§ 13).

գ. փոխառութիւնից, որ կատարում է վարչութիւնը այն չափով, որ կ՚որոշի ընկերութեան ընդհանուր ժողովը։

Ծանօթութիւն. Փոխառութեան ընդհանուր գումարը մուտքից և բաժիններից կազմուած դրամագլխից աւելի պէտք է չլինի։

§ 8. Շրջանառութեան դրամագլխով են կա-

տարվում ընկերութեան առևտրական գործողութիւնները և ընկերութեան ընթացիկ ծախքերը։

§ 9. Պահեստի դրամագլուխը կազմվում է.

ա. ընկերութեան ձեռնարկութիւններից իւրաքանչիւր տարի ստացուած վաստակի այն մասից, որ որոշում է ընկերութեան ընդհանուր ժողովը (§ 55).

բ. այն գումարներից, որոնք կը գոյանան կանոնադրութեան և հաշուի դրքոյկների վաճառումից (§ 15).

գ. կոպէկների կոտորակներից, որոնք դուրս կը քցուին վաստակի բաժանման ժամանակ (ծանօթութիւն 4, § 55).

դ. պահեստի դրամագլխի տոկոսներից (§ 11) և

ե. պատահական մուտքերից։

§ 10. Պահեստի դրամագլուխը նշանակվում է բացառապէս լրացնելու այն վնասները, որոնք կարող են պատահել ընկերութեան գործառնութիւնների ժամանակ չնախատեսուած հանգամանքներից։

§ 11. Պահեստի դրամագլխով ընդհանուր ժողովի որոշմամբ դնվում են պետական կամ տէրութեան կողմից ապահոված տոկոսաբեր թղթեր, որոնք պահվում են խնայողական արկղներում, պետական բանկում, նրա դրասենեակներում ու բաժանմունքներում կամ, պատշաճաւոր թոյլատուութեամբ, պետական գանձարանում. Պահեստի

գումարը իւր նպատակի համար (§ 10) գործադրվում է միմիայն ընկերութեան անդամների ընդհանուր ժողովի որոշմամբ։

Ընկերութեան կազմը եւ նրա անդամների իրաւունքներն ու պարտաւորութիւնները.

§ 12. Ընկերութեան անդամ կարող են լինել բոլոր կոչման մարդիկ, առանց բացառութեան սեռի, այլ և ամէն տեսակ ընկերութիւններ, հասատատութիւններ, ընկերակցութիւններ, արտելներ, հոգաբարձութիւններ, դպրոցներ և այլն, որոնք կը համաձայնին ենթարկուել այս կանոնադրութեան։

Մանօթութիւն 1. Անդամների թիւը չի սահմանափակվում։

Մանօթութիւն 2. Ընկերութեան կազմի մէջ չեն ընդունվում. ա. դպրոցների սաները. բ. ծառայութեան մէջ գտնուող ստորին աստիճանի պինուորները և գ. այն անձինք, որոնց իրաւունքները դատարանի վճռով սահմանափակուած են։

§ 13. Անդամ լինել ցանկացողը վճարում է.

ա. մուտքի համար 2 ռ.

բ. բաժին 10 ռ.

Մանօթութիւն. Բաժինը կարելի է վճարել միանգամից կամ մասամաս ընդհանուր ժողովի որոշման համաձայն.

§ 14. Ընդհանուր ժողովը որոշում է, թէ մէկ

անձն որքան բաժին կարող է ունենալ։

§ 15. Իւրաքանչիւր անձին, ընկերութեան անդամ դրուելու ժամանակ, տրվում է ընդհանուր ժողովի որոշած տուրքի վճարով մի մի օրինակ կանոնադրութիւն և հաշուեգրքոյկ, որի մէջ գրվում է՝ անդամի դրամական վճարները, նրան տրուած ապրանքների արժէքը և բաժնին հասանելիք շահը (դիվիդենդ) ու վերցրած ապրանքի բաշխը (պրեմիան), այլ և ընկերութեան դրամարկղից նրա ստացած փողերը։

Ծանօթութիւն. Ընկերութիւնը իր խանութներում պէտք է ունենայ առանձին մատեաններ, ուր պէտք է գրուին իւրաքանչիւր անդամի անձնական հաշիւները՝ նրա տարուայ ընթացքում վերցրած ապրանքների գումարը որոշելու համար։

§ 16. Իւրաքանչիւր անդամ ընդհանուր ժողովում ունի միայն մի ձայն, անկախ նրա ունեցած բաժինների թուից. այս իրաւունքը ոչ ոքի չի կարելի յանձնել։

Ծանօթութիւն. Այն անդամները, որոնք անմիջական շահ ունին ընկերութեան վերաբերեալ որ և իցէ խնդրում (ապրանքներ մատակարարելում, բնակարաններ վարձու տալում և զանազան առևտրական պայմաններ կապելում) չեն մասնակցում նրանց վճռելու ժամանակ։

§ 17. Բաժինը կարելի է յանձնել վարչութեան գիտութեամբ՝ թէ ընկերութեան անդամներին և թէ կողմնակի անձանց, որոնք զրկուած չեն անդամ լինելու իրաւունքից. եթէ բաժինը

յանձնուի կողմնակի անձի, վերջինս պարտաւոր է հատուցանել մուտքի վճարը։

Ծանօթութիւն. Մուտքի վճարը չի վերադարձվում անդամներին ոչ ընկերութիւնից կամաւոր հեռանալու և ոչ նրան հեռացնելու դէպքում։

§ 18. Իւրաքանչիւր անդամ վնասի դէպքում պատասխանատու է միմիայն ընկերութեան դրամարկղում իւր ունեցած բաժնի դրամագլխով և բացի դրանից ընկերութեան գործերի վերաբերմամբ չի ենթարկվում ոչ անձնական պատասխանատուութեան և ոչ որ և իցէ լրացուցիչ պարտաւորական վճարի։

§ 19. Ընկերութեան այն անդամը, որ անճիշտ կըլինի ընկերութեան դրամարկղին հասանելի վճարների հատուցման մէջ (§§ 3 և 13) կարող է, վարչութեան առաջարկութեամբ, արձակուել անդամութիւնից ընդհանուր ժողովի որոշմամբ։

§ 20. Բացի վճարների մէջ անճիշտ գտնուելուց, ընկերութեան անդամութիւնից հեռացնելու պատճառ կարող են լինել յամառութեամբ կանոնադրութեան խախտումն և ընկերութեան շահերին վնասելը։

§ 21. Ընկերութեան անդամներին անդամութիւնից հեռացնելը կարող է տեղի ունենալ ընդհանուր ժողովին մասնակցողների $^2/_3$ ձայների վճռով (§ 31). Ժողովը պարտաւոր է արձակուողի ցանկութեամբ լսել նրա բոլոր բացատրութիւն-

ները իրան արդարացնելու համար։

§ 22. Թէ արձակուող և թէ կամաւորապէս հեռացող անդամներին, այլ և մի քանի բաժին ունեցողներին, վարչութիւնը վերադարձնում է, նրանց ցանկութեան համաձայն, դրամարկղում իրենց ունեցած բաժինները, նրանց հասանելիք շահը և վերցրած ապրանքի բաշխը կամ նրանց բաժնեմասը, միայն տարեկան հաշիւը ընդհանուր ժողովում հաստատելուց յետոյ և միմիայն բոլոր հաշիւները ընկերութեան հետ վերջացնելուց և թէ դուրս եկողների և թէ աւելորդ բաժնեմասեր հանողների վրայ ընկնող վնասը վճարելուց յետոյ։ Հատուցման ժամանակամիջոցը որոշում է ընդհանուր ժողովը, բայց տարեկան հաշիւը հաստատելուց երեք ամսից աւելի չպէտք է անցնի։

§ 23. Թէ կամաւորապէս հեռացողները և թէ վճարների անճշտութեան պատճառով արձակուածները նորից կարող են ընկերութեան անդամ դրուել, հատուցանելով, համաձայն § 13, պարտաւորական բաժինը և մուտքի վճարը. իսկ ուրիշ պատճառներով արձակուածները ոչ մի դէպքում այլևս անդամ չեն ընդունվում։

Դանօրութիւն. Այն անդամները, որոնք արձակուած են վճարների անճշտութեան պատճառով, պարտաւոր են, բացի դրանից, նախապէս վճարել ընկերութեանը իւրանց պարտքերը։

§ 24. Անդամի մահուան դէպքում բոլոր

նրան պատկանած բաժինները նրանց հասանելիք շահովը և բաշխերովը վճարվում են նրա ժառանգներին նոյն հիմունքներով, ինչպէս կամաւորապէս հեռացողներին (§ 22)։

Ընկերութեան գործերի կառավարութիւնը.

§ 25. Ընկերութեան գործերը կառավարում են՝ ա, անդամների ընդհանուր ժողովը և բ, վարչութիւնը։

Ընդհանուր ժողով.

§ 26. Ընդհանուր ժողովին իրաւունք է տրվում, եթէ հարկաւոր համարուի, ընտրել վարչութեան հետ միասին առանձին վերահսկող մարմին (խորհուրդ կամ վերահսկող յանձնաժողով), որի գործունէութեան կարգը որոշվում է ընդհանուր ժողովից հաստատուած հրահանգով։

§ 27. Ընդհանուր ժողովները լինում են սովորական և արտաքոյ կարգի։ Սովորական ժողովները գումարվում են իւրաքանչիւր տարի վարչութեան կողմից, ոչ ուշ քան ապրիլ ամիսը, քննելու և հաստատելու տարեհաշիւը և հաշուեկշիռը, նոր տարուայ ծախքերի նախահաշիւն ու գործունէութեան նախագիծը, նոյնպէս և վարչութեան (§ 36) և վերահսկող մասնաժողովի (§ 53) անդամներ ընտրելու համար։ Այս

ժողովի մէջ վճռվում՝ են և ուրիշ գործեր, որոնք վարչութեան իրաւունքից վեր են կամ այնպիսի գործեր, որ կ՚առաջարկէ վարչութիւնը ընդհանուր ժողովին։

Ծանօթութիւն. Ոչ ոք ընկերութեան անդամներից իրաւունք չունի առանց յարգելի պատճառների հրաժարուել ընդհանուր ժողովի նրան յանձնած պարտականութիւնները կատարելուց:

§ **28**. Արտաքոյ կարգի ընդհանուր ժողովներ հրաւիրւում է վարչութիւնը ըստ իւր հայեցողութեան, կամ ըստ պահանջման վերստուգող յանձնաժողովի, կամ թէ ընկերութեան բոլոր անդամների $^{1}/_{10}$ մասի։ Այդպիսի պահանջները վերստուգող յանձնաժողովի կամ ընկերութեան անդամների կողմից արտաքոյ կարգի ժողով հրաւիրելու համար՝ վարչութիւնը պարտաւոր է կատարել պահանջը ստանալու օրից ոչ ուշ, քան երկու շաբաթուայ ընթացքում։

§ **29**. Ընդհանուր ժողովը, համաձայն այս կանոնադրութեան, վճռում է ընկերութեան գործերի վերաբերեալ բոլոր խնդիրները, բայց յատկապէս նրա իրաւասութեանը ենթարկվում են՝ տուրուտուրի նիւթերն ու չափը որոշելը, ընկերութեան համար անշարժ կայքեր ձեռք բերելը, ընկերութեան կայքերը վաճառելը, կապալով տալն ու գրաւ դնելը, այլ և ընկերութեան ձեռնարկութիւններն ընդարձակելը։ Ընդհանուր ժողովին իրաւունք է տրվում՝ ձեռնարկութիւններն

ընդարձակելու և անշարժ կայքեր ձեռք բերելու ժամանակ որոշել ծախքերը ծածկելու կարգը։ Ընդհանուր ժողովի զբաղմունքների նիւթ կազմում է նաև ընդհանրապէս այն բոլոր գործերի վճռելը, որ կ՚առաջարկեն վարչութիւնը, վերստուգող յանձնաժողովը, ընկերութեան անդամները, Նահանգապետը և Ներքին Գործերի Նախարարը։

§ **30**. Վարչութիւնն օր առաջ յայտարարում է բոլոր անդամներին ընդհանուր ժողով գումարելու տեղի, ժամանակի և նրա քննութեանը ենթակայ խնդիրների մասին. հաղորդում է այդ մասին նախապէս և տեղական պօլիցիայի գլխաւորին և կախում է յայտարարութիւններ ընկերութեան խանութներում։

Ծանօթութիւն. Ընդհանուր ժողովներում կարող են քննուել միայն այն խնդիրները, որոնք նշանակուած են հրաւիրաթերթերում և անմիջապէս վերաբերում են ընկերութեան կանոնադրութեամբ որոշուած գործունէութեանը և որոնց մասին յայտնուած է տեղական պօլիցիայի գլխաւորին.

§ **31**. Ընդհանուր ժողովներն օրինական համարուելու համար պէտք է ներկայ լինի $^{1}/_{5}$ մասը բոլոր անդամների, որոնք գտնվում են վարչութեան տեղում, իսկ վճռելու համար այն խնդիրները, որոնք վերաբերում են անդամներ արձակելուն, ձեռնարկութիւնը ընդարձակելուն, շրջանառութեան դրամագլուխը մեծացնելուն կամ

փոքրացնելուն, կանոնադրութեան փոփոխելուն կամ լրացնելուն և ընկերութեան գործունէութիւնը վակելուն, պահանջվում է ընկերութեան բոլոր անդամների $^2/_3$-կան մասը։ Ընդհանուր ժողովում խնդիրները վճռվում են ներկայ եղող անդամների ձայների մեծամասնութեամբ, բացի այս յօդուածի մէջ յիշուած խնդիրներից, որոնց վճռելու համար պահանջվում է ներկայ եղող անդամների $^2/_3$ ձայների առաւելութիւն։ Ձայների հաւասարութեան դէպքում, եթէ խնդիրը վճռվում է ձայների հասարակ առաւելութեամբ, ընդունվում է այն կարծիքը, որի կողմն է ժողովի նախագահը։

Մանօրութիւն 1. Ընդհանուր ժողովներում բոլոր ընտրութիւնները (§§ 36 և 53), այլ և 21 յօդուածի հիման վրայ անդամներից մէկն ու մէկին արձակելը և վարչութեան անդամ փոխելը (ծանոթ. § 50), կատարվում է գաղտնի քուէարկութեամբ, իսկ բոլոր մնացած դէպքերում ձայները հաւաքվում են այն կարգով, ինչ կարգ կ'որոշէ ընդհանուր ժողովը։

Մանօրութիւն 2. Սոյն յօդուածի պահանջուած պայմանների համեմատ ընդհանուր ժողովի կողմից հաւանութիւն ստացած առաջարկութիւնները՝ ներկայ կանոնադրութեան փոխելու կամ լրացնելու համար, ներկայացվում են ի հաստատութիւն կառավարութեան օրինասահման կարգով, բացատրելով այն պատճառներն ու կշռադատութիւնները, որոնք առաջ են բերում այդ փոփոխութիւնների կամ լրացումների կարիորութիւնը։

§ 32. Եթէ ընդհանուր ժողովի առաջին նիստը անհամապատասխան լինի նախընթաց յօդուածով պահանջուած անդամների թուին, որոնց մասնակցութեամբ միայն ժողովը օրինական է համարվում, այդ դէպքում ոչ պակաս քան մի շաբաթ անցնելուց յետոյ միայն հրաւիրվում է երկրորդ ժողով, որ, առանց ուշադրութիւն դարձնելու ներկայ եղող անդամների թուին, համարվում է օրինական և նրա վճիռները—վերջնական, որի մասին վարչութիւնը պարտաւոր է առաջուց յայտարարել հրաւիրագրերներում։ Այդպիսի երկրորդ ժողովում պէտք է քննուին միայն այն խնդիրները, որոնք պէտք է վճռուէին առաջին ընդհանուր ժողովում, բայց մնացել են անվճիռ. այդ ժամանակ և նախընթաց յօդուածում առանձնապէս որոշուած խնդիրները լուծվում են ներկայ եղող անդամների $^2/_3$ ձայների առաւելութեամբ, իսկ մնացած խնդիրները պարզ առաւելութեամբ։ Ընդհանուր ժողովների վճիռները պարտաւորեցուցիչ են բոլոր անդամների համար, թէ ժողովին մասնակցողների և թէ բացակաների համար։

§ 33. Ընդհանուր ժողովի քննութեան ենթակայ խնդիրները ներկայացնում է վարչութիւնը, ուստի այն անդամները, որոնք կամենում են որ և իցէ առաջարկութիւն անել ընդհանուր ժողովին, պարտաւոր են դիմել վարչութեանը ոչ ուշ, քան 7 օր ընդհանուր ժողովից առաջ։ Եթէ

առաջարկութիւնը արուած է անդամների 1/10 մասի կողմից, վարչութիւնը պարտաւոր է այդ առաջարկութիւնը ներկայացնել հետաքրքիր ընդհանուր ժողովին իր եզրակացութեան հետ միասին։

§ 34. Ընդհանուր ժողովում գործերի կանոնաւոր ընթացքի համար անդամներն իրանց միջից ընտրում են մի նախագահ և արձանագրութիւններ կազմելու համար մի քարտուղար։ Իսկ մինչև նախագահի ընտրելը, ժողովին նախագահում է վարչութեան նախագահը։

§ 35. Ընդհանուր ժողովի որոշումները վաւերացվում են արձանագրութիւններով, որոնք կարդացվում են ի լուր ներկայ եղողների՝ նիստի վերջում և որոնց ստորագրում են ժողովի նախագահը, քարտուղարը, վարչութեան ներկայ եղող բոլոր անդամները և ընկերութեան ներկայ եղող անդամներից առնուազն 3 հոգի։

Ընկերութեան վարչութիւնը, նրա իրաւունքներն ու պարտաւորութիւնները.

§ 36. Ընկերութեան գործերի անմիջական վարումը պատկանում է վարչութեանը, որ գտնվում է Երևանի նահանգի Վաղարշապատ գիւղում և բաղկանում է ոչ պակաս քան երեք անդամներից, որոնց ընտրում է ընդհանուր ժողովը իւր միջից երեք տարի ժամանակով։

14145

Ծանօթութիւն 1. Վարչութեան անդամ կարող են ընտրուել այն անձինք, որոնք ունին առնուազը մի ամբողջ բաժին։

Ծանօթութիւն 2. Վարչութեան անդամների թիւը որոշում է ընդհանուր ժողովը ընկերութեան առևտրական գործողութիւնների չափին համեմատ (առևտրական ամէն մի ճիւղը կառավարելու համար կարելի է ընտրել վարչութեան մի մի անդամ։)

Ծանօթութիւն 3. Վարչութեան անդամ չեն կարող ընտրուել ընկերութեանը նիւթեր մատակարարող և ընկերութեան գործակատար անդամները։

§ 37. Վարչութեան անդամներին փոխարինելու համար, նրանց երկարատև բացակայութեան կամ հիւանդութեան ժամանակ, այլ և մահուան կամ վարչութեան անդամութիւնից անժամանակ հեռանալու դէպքում, ընդհանուր ժողովը ընտրում է համապատասխան թուով անձնափոխանորդներ նոյն հիմունքներով, ինչպէս և վարչութեան անդամները, որոնք պաշտօն վարելու միջոցին վայելում են այդ պաշտօնին յատուկ բոլոր իրաւունքներն ու առաւելութիւնները։

§ 38. Վարչութեան անդամների և անձնափոխանորդների սկզբնական ընտրութիւնից մի տարի անցնելուց յետոյ թէ առաջիններից և թէ վերջիններից ընդհանուր ժողովի սահմանած մի որոշ թիւ հեռանում է իւրաքանչիւր տարի՝ սկզբում վիճակով, իսկ յետոյ ընտրութեան աւագութեան կարգով, և հեռացողների փոխարէն

ընտրվում են վարչութեան նոր անդամներ և անձնափոխանորդներ։

Ծանօթութիւն. Հեռացող անդամները և անձնափոխանորդները կարող են վերընտրուել, եթէ ցանկանան։

§ 39. Վարչութեան հեռացող անդամին փոխարինող անձնափոխանորդը մնում է վարչութեան կազմի մէջ մինչև վարչութեան հեռացող անդամի ժամանակամիջոցի լրանալը, բայց ոչ աւելի այն ժամանակամիջոցից, որի համար ընտրուած է ինքն անձնափոխանորդը։

§ 40. Վարչութեան անդամներն ամենայն տարի տարեկան ընդհանուր ժողովից յետոյ ընտրում են իւրեանց միջից նախագահ, փոխնախագահ, դանձապահ և քարտուղար։

Ծանօթութիւն. Գանձապահի և քարտուղարի պաշտօնի համար կարող է ընտրուել մէկ անձն։

§ 41. Վարչութեան անդամներն ընկերութեան գործերը վարելու աշխատութեան համար կարող են ստանալ ընդհանուր ժողովի որոշմամբ կամ որոշ ռոճիկ կամ իբրև վարձատրութիւն ընկերութեան վաստակից որոշ տոկոսիք։

§ 42. Վարչութիւնը կառավարում է ընկերութեան բոլոր գործերն ու դրամագլուխները։ Նրա պարտաւորութիւններն են.

ա, ընդունել, հատուցանել, պահել դրամներ և տոկոսաբեր թղթեր ընդհանուր ժողովի որոշած կարգով.

բ, կազմակերպել հաշուապահութիւն և վարել հաշիւները, այլ և կազմել §§ 51-53 համաձայն՝ տարեկան հաշիւ, հաշուեկշիռ, նախահաշիւ և գործունէութեան նախագիծ.

գ, վարձել ընկերութեան գործերի համար պաշտօնեաներ, որոշել նոցա պարապմունքներն ու ռոճիկը, այլ և նոցա արձակել.

դ, գնել, վաճառել, պահել տան գործածութեան համար զանազան նիւթեր և հսկել, որ նիւթերը լաւ լինին.

ե, որոշել պատրաստելի ապրանքների տեսակները և նրանց ձեռք բերելու եղանակը (առ ձեռն գրամով կամ պարտքով).

զ, ընկերութեան ձեռնարկութիւնների կազմակերպութիւնն ու կառավարելը.

է, միջոցներ որոնել ապրանքները բարելաւելու և աժանացնելու.

ը, վարձել պահեստի համար տներ, բնակարաններ և այլ շինութիւններ, որ պէտք են ընկերութեան գործողութիւնների համար.

թ, ապահովագրել ընկերութեան գոյքը.

ժ, ընդհանուր ժողովի որոշած սահմաններով մուրհակներ և ժամանակ ունեցող այլ պարտաթղթեր տալ և ընդունել վճարելու համար.

ժա, կապել ընկերութեան անունով դաշնագրեր և պայմաններ ընկերութեանը ապրանք մատակարարելու համար.

ժբ, տալ հաստատմաթղթեր թէ վարչութեան և թէ ընդհանուր ժողովի վարձած պաշտօնեաներին.

ժգ, օրինական ակտեր կատարել անշարժ կայքեր ձեռք բերելու կամ ուրիշին վաճառելու համար.

ժդ, ընդունել ընկերութեան նոր անդամներ և

ժե, գումարել ընդհանուր ժողովներ և ընդհանրապէս վարել և տնօրինել ընկերութեան բոլոր գործերն առանց բացառութեան, ընդհանուր ժողովի որոշած սահմաններով։

Վարչութեան գործունէութեան մասնաւոր կարգը, նրա իրաւունքների և պարտաւորութիւնների սահմանները որոշվում են հրահանգով, որ հաստատում և փոփոխում է ընկերութեան անդամների ընդհանուր ժողովը։

§ 43. Վարչութիւնը ծախսեր է անում նախահաշուի համեմատ, որ իւրաքանչիւր տարի հաստատում է ընդհանուր ժողովը։ Ժողովին իրաւունք է տրվում որոշել, թէ վարչութիւնը որքան գումար կարող է ծախսել նախահաշուից դուրս անյետաձգելի դէպքում։ Ամէն մի այսպիսի ծախսի մասին պէտք է յայտարարուի առաջիկայ ընդհանուր ժողովին ի հայեցողութիւն։

§ 44. Վարչութիւնն առանձնապէս հոգս է քաշում այն մասին, որ շրջանառութեան դրամադլուխը չմնայ անգործ. այս նպատակով վարչութեան անդամները, հսկելով առևտուրի վրայ, կազմում են ցուցակ այն ապրանքների, որ չեն գտնվում ընկերութեան պահեստում և ազատ դրամներով գնում են պահանջուող նիւթերը։ Իսկ եթէ ապրանքներ գնելը համարվում է հանգամանքների շնորհիւ անժամանակ և ոչ օգտակար, այդ դէպքում ազատ դրամները դարձնում է տոկոսաբեր թղթեր կամ զետեղում է ընթացիկ հաշուով, ըստ հայեցողութեան ընդհանուր ժողովի, տեղական վարկային հաստատութիւններից մէկում։

§ 45. Ապրանքների վաճառումը ընկերութեան խանութից պէտք է կատարուի առանց սակարկութեան և ամէնքին միևնոյն գնով, որի համար վարչութիւնը խիստ հսկողութիւն պէտք է ունենայ։ Ապրանքները որոշած գնով ծախելու համար վարչութիւնը պէտք է կազմի անդամների ստորագրութեամբ պրէյս-կուրանտ, որ պէտք է կախուի ընկերութեան խանութում ամէնքի համար տեսանելի տեղում։ Եթէ ապրանքների բազմատեսակութեան պատճառով անկարելի լինի տեղաւորել պրէյս-կուրանտում, վարչութիւնը պէտք է գները նշանակէ ապրանքների վրայ։

§ 46. Դրադրութիւնը ընկերութեան գործերի մասին կատարվում է վարչութեան անունով, ստորագրութեամբ նախագահի կամ ան-

դամներից մէկին։

§ 47. Մուրհակները, հաւատարմագրերը, դաշնագրերը, պայմանները, կալուածագրերը և ուրիշ ակտերը և վարկային հաստատութիւններից յետ ստանալու պահանջները պէտք է ստորագրեն վարչութեան անդամների ընդհանուր թուի գոնէ կէսը։

§ 48. Վարչութիւնը գումարվում է ըստ կարևորութեան, բայց յամենայն դէպս ոչ պակաս քան ամիսը մէկ անգամ, վարչութեան անդամների փոխադարձ համաձայնութեամբ որոշած օրերում, որի մասին յայտնվում է ընկերութեան բոլոր անդամներին։ Վարչութեան նիստերին, բացի նրա անդամներից, կարող են ներկայ լինել և ընկերութեան անդամները, ընդհանուր ժողովի թոյլատրութեամբ, բայց առանց վճռող ձայնի իրաւունքի։ Վարչութեան ժողովները կայացած են համարվում, երբ ներկայ են անդամների մեծամասնութիւնը։ Վարչութեան նիստերում կազմվում են արձանագրութիւններ, որոնց ստորագրում են բոլոր ներկայ եղող անդամները։

§ 49. Վարչութեան որոշումները լինում են ձայների մեծամասնութեամբ, իսկ երբ մեծամասնութիւն չէ կազմվում, այն ժամանակ վիճելի խնդիրը յանձնվում է ընդհանուր ժողովի քննադատութեանը, որին ներկայացվում են նաև այն խնդիրները, որոնց վերաբերութեամբ վարչութիւ-

նը կամ վերատեսուչը յանձնաժողովը կարևոր են համարում գործել ընկերութեան անդամների ընդհանուր համաձայնութեամբ, կամ որոնք կանոնագրութեան և ընդհանուր ժողովից հաստատուած հրահանգի հիման վրայ չեն ենթարկվում վարչութեան իրաւասութեանը։

Ծանօթութիւն. Եթէ անդամներից մէկը համաձայն չէ վարչութեան որոշմանը և կը պահանջի իւր կարծիքը մացնել արձանագրութեան մէջ, այս դէպքում նա ազատ է համարվում պատասխանատուութիւնից կայացած վճռի համար։

§ 50. Վարչութեան անդամները կատարում են իրանց պարտականութիւնները ընդհանուր օրէնքների և սոյն կանոնագրութեան մէջ ծրագրուած որոշումների համաձայն, և ի դէպս ապօրինի կարգադրութիւնների, իրաւունքի սահմանից անցնելու, անգործութեան և ինչպէս այս կանոնագրութեան, նոյնպէս և ընկերութեան անդամների ընդհանուր ժողովի որոշումների խախտման, ենթարկվում են պատասխանատուութեան ընդհանուր օրէնքների հիման վրայ։

Ծանօթութիւն. Վարչութեան անդամները կարող են փոխուել ընկերութեան անդամների ընդհանուր ժողովի ձայների 2/3 որոշմամբ նոյն իսկ մինչև իրանց պաշտօնավարութեան ժամանակամիջոցի լրանալը։

Ընկերութեան գործերի վերաբերեալ հաշուետուութիւնը, վաստակի բաժանումն եւ շահի բաշխումը:

§ 51. Ընկերութեան գործառնութեան տարին համարվում է յունուարի 1-ից մինչև յունուարի 1-ը։ Իւրաքանչիւր անցած տարուայ համար վարչութիւնը կազմում է և ներկայացնում ընկերութեան անդամների սովորական տարեկան ընդհանուր ժողովին քննելու և հաստատելու տարեկան հաշիւը ընկերութեան գործառնութեան մասին և շրջանառութեան հաշուեկշիռը։

Ծանօթութիւն. Տարեկան ընդհանուր ժողովից 2 շաբաթ առաջ ընկերութեան անդամների համար բաց պէտք է մնան վարչութեան դրքերը, բոլոր հաշիւներով, փաստաթղթերով և յաւելուածներով, որոնք վերաբերում են տարեհաշուին և հաշուեկշռին։

§ 52. Տարեկան հաշիւը պէտք է պարունակի հետևեալ գլխաւոր կէտերը. ա. շրջանառութեան և պահեստի դրամագլուխների վիճակը. բ. այն ժամանակամիջոցի ընդհանուր մուտքն ու ելքը, որի համար հաշիւը կազմվում է, թէ ապրանք պատրաստելու ու դնելու մասին և թէ նրանց վաճառելու. գ. հաշիւ ընկերութեան պաշտօնեաների ռոճկի համար արած ծախսերի և ընկերութեան գործերը վարելու համար կատարուած այլ ծախսերի. դ. ընկերութեան արդի դոյքի և

նրան պատկանող պաշարի հաշիւը. ե. ընկերութեան և կողմնակի անձանց փոխադարձ պարտքերի հաշիւը. զ. արդիւնքի և վնասի հաշիւը և է. զուտ վաստակի հաշիւը և նրա մօտաւորապէս բաշխումը։

§ 53. Ընկերութեան տարեհաշիւը և հաշուեկշիռը ստուգելու համար ընդհանուր ժողովը մի տարի առաջ ընտրում է վերաստուգող յանձնաժողով բաղկացած երեք կամ աւելի անդամներից, որոնք չպէտք է լինին ոչ վարչութեան անդամներից և ոչ ընկերութեան գործերի կառավարող այլ պաշտօնեաներից։ Այս յանձնաժողովն անպատճառ գումարվում է հետևեալ տարեկան ընդհանուր ժողովից մի ամիս առաջ և անցած տարուայ տարեհաշիւը ու հաշուեկշիռը, բոլոր դրքերը, հաշիւները, փաստաթղթերը, յաւելուածները, վարչութեան գործունէութիւնը և ընկերութեան բաժանմունքները վերաստուգելուց յետոյ տարեհաշիւը և հաշուեկշիռը իւր եզրակացութեան հետ միասին ներկայացնում է ընդհանուր ժողովին, որ և կայացնում է նրանց մասին իր վերջնական վճիռը։ Այս յանձնաժողովը, եթէ կարևոր համարէ կամ եթէ ընդհանուր ժողովը յանձնարարէ, իրաւունք ունի նոյնպէս զննել և վերաստուգել ընկերութեան բոլոր դոյքը տեղն ու տեղը և ստուգել տարուայ ընթացքում արած գործառնութիւնը, ինչպէս և այս դոյքերը պահելու

համար արուած ծախսերը և առհասարակ միջոցներ որոնել դաղափար կազմելու թէ ինչ աստիճանի օգտակար և ժամանակին յարմար ու շահաւէտ է ընկերութեան համար թէ կատարուած գործառնութիւնն ու ծախսերը և թէ ընկերութեան բոլոր շրջանառութիւնը։ Վերև յիշուածները կատարելու համար վարչութիւնը պարտաւոր է տալ յանձնաժողովին բոլոր կարևոր միջոցները։ Նոյն յանձնաժողովին յանձնվում է նախապէս զննելու համար ընկերութեան առաջիկայ տարուայ նախահաշիւը և ընկերութեան գործունէութեան նախագիծը, որ յանձնաժողովը իր եզրակացութեան հետ միասին ներկայացնում է ընկերութեան անդամների ընդհանուր ժողովին։ Անկախ սրանից յանձնաժողովն իրաւունք ունի, եթէ կարևոր համարէ, պահանջել վարչութիւնից գումարել արտաքոյ կարգի ընդհանուր ժողովներ (§ 28)։

Մանրութիւն. Ընկերութեան գործերի վերատեսուչութիւն կարող է կատարուել նաև տեղական Նահանգապետի կարգադրութեամբ, եթէ սա տեղեկութիւն ստանայ ընկերութեան մէջ տեղի ունեցած անկարգութիւնների կամ կանոնադրութեան խախտման մասին։

§ 54. Տարեկան հաշիւը և հաշուեկշիռը ընդհանուր ժողովի հաստատելուց յետոյ ներկայացվում են երեքական օրինակներով Ներքին գործոց նախարարութեան տնտեսական դեպարտամենտին և տեղական Նահանգապետին։ Բացի

դրանից, ընդհանուր ժողովի հայեցողութեամբ, կարելի է տպագրել և տեղական թերթերում։

§ 55. Հաշիւն ընդհանուր ժողովի կողմից հաստատուելուց յետոյ՝ տարեկան զուտ վաստակից, այսինքն բոլոր ծախքերը և վնասները ծածկելուց յետոյ մնացած գումարից, եթէ այդպիսի գումար կըլինի, 10%-ից ոչ պակաս յատկացվում է պահեստի գումարի համար և մի այնպիսի գումար է յատկացվում բաժիններին շահ տալու համար, որ ամէն մէկ բաժնի ռուբլուն ընկնի տարեկան 10%-ից ոչ աւելի։ Սրանից յետոյ մնացած գումարից հանելով վարչութեան անդամների օգտին նշանակուած տոկոսիքը, եթէ այդպիսին ընդհանուր ժողովը որոշած կըլինի տալ (§ 41), մնացածը բաժանվում է բոլոր անդամների վերայ նրանց գնած տպրանքների գումարի համաչափաստասխան չափով։

Մանրութիւն 1. Ընդհանուր ժողովին իրաւունք է տրվում վաստակի մէկ մասը գործադրել ընկերութեան անդամներին օգտակար նպատակների համար (§ 1 ծանոթ.)։

Մանրութիւն 2. Երբ որ պահեստի դրամագլուխը հաւասարուի բաժինների ընդհանուր գումարին, այնուհետև կարելի է, ընդհանուր ժողովի որոշմամբ, այլ ևս պահեստի գումարի համար վաստակից տոկոսներ չյատկացնել։ Պահեստի գումարի համար վաստակից նորէն մաս վերցնելը պարտաւորեցուցիչ է, երբ պահեստի գումարի մի մասը ծախսուած կըլինի։

Ծանօթութիւն 3. Շահը տրվում է միմիայն ամբողջ բաժիններին և ամբողջ ամիսների համար։

Ծանօթութիւն 4. Շահի կուպէնների կոտորակները չեն տրվում անդամներին, այլ աւելացվում են պահեստի դրամագլխին։

§ 56. Շահը վճարվում է անդամներին երեք ամսուայ ընթացքում՝ վարչութեան տարեկան հաշիւը ընկերութեան ընդհանուր ժողովի կողմից հաստատուելուց յետոյ։

§ 57. Շահը, տիրոջ ցանկութեամբ, կարելի է թողնել ընկերութեան դրամարկղում նոր բաժիններ կազմելու համար։ Այն շահը, որ նախընթաց յօդուածում որոշուած ժամանակի ընթացքում ստացուած չի լինիլ, համարվում է թողնուած նոր բաժիններ կազմելու համար։

Ծանօթութիւն. Երբ անդամի բաժնի դրամագլխի դումարը հասնում է ընդհանուր ժողովի որոշած համաձայն § 14 չափին, դրամարկղում թողած վերև յիշած չափից աւելի շահին տոկոսներ չի տրվում։

Ընկերութեան գործերի վերաբերմամբ ծագած վէճերի քննութիւնը, նրա պատասխանատուութիւնը եւ գործունէութեան դադարումը։

§ 58. Ընկերութեան գործերի վերաբերմամբ ծագած բոլոր վէճերն ընկերութեան անդամների մէջ և նրանց ու վարչութեան անդամների մէջ, նոյնպէս վէճերը վարչութեան անդամների և

ընկերութեան միւս ընտրուած պաշտօնեաների և մասնաւոր անձանց մէջ, վճռվում են կամ ընդհանուր ժողովում, եթէ երկու կողմն էլ համաձայն են այդ բանին կամ քննվում են դատաստանական կարգով։

§ 59. Ընկերութեան պատասխանատուութիւնը սահմանափակվում է նրան պատկանած շարժական ու անշարժ գոյքով և դրամագլուխներով։

§ 60. Եթէ հաշիւները տեսնելուց յետոյ որ և իցէ չնախատեսուած հանգամանքների պատճառով վնաս երևայ, այդ վնասը ծածկվում է պահեստի գումարով, իսկ եթէ այդ բաւական չլինի, շրջանառութեան մէջ գտնուած բաժինների դրամագլխով։ Եթէ այսպիսով ամէն մէկ բաժնի գումարը պակասի, այն ժամանակ այն անդամները, որոնք այլ ևս չեն ունենալ ոչ մի ամբողջ բաժին, պարտաւոր են լրացնել իւրեանց բաժինները մինչև որոշեալ չափը այն ժամանակամիջոցում, որ իւրաքանչիւր անդամ կ'որոշի ընդհանուր ժողովը։

§ 61. Ընկերութեան գոյութեան համար ժամանակ չի նշանակվում։ Եթէ գործի ընթացքին նայելով ընկերութեան փակումը կարևոր համարուի, այդ ժամանակ նրա գործողութիւնները դադարեցվում են ընկերութեան ընդհանուր ժողովի որոշմամբ երկու—մէկը միւսին յաջորդող արտաքոյ կարգի նիստերում, եթէ երկրորդ նիստ-

տից առաջ փակման շարժառիթները վերացած չեն լինիլ։

Ծանօթութիւն. Եթէ ընկերութիւնը թոյլատուութիւն ստանալուց յետոյ մի տարուան ընթացքում իւր գործունէութիւնը չսկսի, չեղած է համարվում։

§ 62. Ընկերութեան գործունէութիւնը դադարեցնելու դէպքում ընկերութեան անդամների ընդհանուր ժողովը ընտրում է իւր միջից մի յանձնաժողով, ոչ պակաս քան երեք անձից, և որոշում ընկերութեան գործերը վերջացնելու կարգը։ Այս յանձնաժողովը գործերը ընդունում է վարչութիւնից։ Յանձնաժողովը հրաւիրում է ծանուցագրերով և յայտարարութիւններով ընկերութեան բոլոր պարտատէրերին, միջոցներ է ձեռք առնում նրանց լիովին բաւականութիւն տալու համար, ընկերութեան գոյքը դրամ է դարձնում, համաձայնութիւն և հաշտութիւն է կայացնում երրորդ անձնաւորութիւնների հետ ընդհանուր ժողովից որոշած սահմաններով։ Պարտատէրերին, ինչպէս և վիճելի պահանջներին լիակատար բաւականութիւն տալու համար, դուժարները դրվում են ի հաշիւ պարտատէրերի պետական որ և իցէ վարկային հաստատութեան մէջ. մինչև այդ ժամանակ չի կարելի բաւականութիւն տալ ընկերութեան անդամներին ընկերութեան տրամադրութեան տակ մնացած միջոցների համապատասխան չափով։ Իւր գործունէութեան համար յանձնաժողովը հաշիւներ է ներկայացնում ընդհանուր ժողովին նոյն ժողովի որոշած ժամանակամիջոցներում և անկախ դրանից՝ փակման բոլոր գործերը վերջացնելուց յետոյ ներկայացնում է ընդհանուր հաշիւ։

§ 63. Այս յանձնաժողովի ընդհանուր հաշիւը հաստատելուց յետոյ (§ 62), ընկերութեան անդամներին վերադարձվում են նրանց բաժինները, նրանց հասանելի շահը և բաշխը, կամ թէ հանելով այն մասը, որ կարող է ընկնել նրանց վրայ (§ 60). ընկերութեան մնացած կայքը, եթէ այդպիսին կըլինի, գործադրվում է հանրօգուտ նպատակների, ընդհանուր ժողովի որոշմամբ, որ օրինական զօրութիւն է ստանում Նահանգապետի հաստատելուց յետոյ, իսկ եթէ Նահանգապետը չտայ իւր համաձայնութիւնը, այս խնդիրը վերջնականապէս լուծելու համար ներկայացվում է Ներքին Գործոց Նախարարին։

§ 64. Փակման թէ ձեռնամուխ լինելու և թէ վերջացնելու մասին, առաջին դէպքում վարչութեան և վերջին դէպքում յանձնաժողովի արած կարգադրութիւնների բացատրութեան հետ միասին տեղեկութիւն է տրվում Ներքին Գործոց Նախարարութեանը Նահանգապետի միջոցաւ, այլ և պատշաճաւոր ծանուցումներ է արվում ի գիտութիւն ընկերութեան անդամների և ընկերու-

թեան գործերի հետ առնչութիւն ունեցող բոլոր անձանց։

§ 65. Եթէ անկախ նահանգապետներին և քաղաքապետներին յատկացրած (յօդ. 321 և 862 հ. II. ժ. օր., հր. 1892 թ., ընդհ. նահ. հաստ.) հանրային ժողովները պետական կարգերի և հանրային ապահովութեան ու բարոյականութեան դէմ մերկայումների դէպքում փակելու իրաւունքից, նահանգապետը կարևոր համարի փակել ընկերութիւնը որ և է այլ պատճառներով, այդ մասին նա դիմում է Ներքին Գործոց Նախարարութեանն ի հայեցողութիւն։

Ծանօթութիւն. Երբ ընկերութիւնը փակուելու լինի Նահանգապետի կարգադրութեամբ, նա պիտի նշանակէ ընդհանուր ժողով գումարելու ժամանակն ու կարգը՝ ընկերութեան գործերը վերջացնելու խնդիրը լուծելու համար, կամ անմիջապէս ինքը կարող է ընտրել ընկերութեան անդամներից յանձնաժողով նրա գործելը վերջացնելու համար։